ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«27» դեկտեմբեր 2014թ. No 74 – Ն

«ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» N 3.1.1 – 028 – 2014 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12–րդ կետ «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետությունում քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների հաշվառման և հաշվետվության համակարգն լիարժեք, արդյունավետ դարձնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել
   1) «Քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների համաճարակաբանական հսկողություն» N3.1.1-028-2014 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելված 1-ի:
   2) «Քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների ցանկը, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման

ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղեր արտահերթ հաղորդման»՝ համաձայն հավելված 2-ի:

3) «Քիմիական թունավորման դեպքի մասին շտապ հաղորդման քարտ» ձև 1ա, «Ճառագայթային ախտահարման դեպքի մասին շտապ հաղորդման քարտ» ձև 1բ՝ համաձայն հավելված 3-ի:

4) «Քիմիական թունավորման դեպքի հաշվառման մատյանը» ձև 2ա, «Ճառագայթային ախտահարման դեպքի հաշվառման մատյանը» ձև 2բ՝ համաձայն հավելված 4-ի:

5) «Քիմիական թունավորումների ամսական հաշվետվության ձևաչափը» ձև 3ա, «Ճառագայթային ախտահարումների ամսական հաշվետվության ձևաչափը» ձև 3բ՝ համաձայն հավելված 5-ի:

2. Սույն հրամանի հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014թվական դեկտեմբերի 27-ի թիվ 74 -Ն հրաման

«ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» N 3.1.1 – 028 – 2014 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Սույն սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը (այսուհետև՝ կանոններ և նորմեր) նախատեսված են բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների՝ (այսուհետ՝ ԲՕևՍԿ) ներառյալ ախտաբանաանատոմիական բաժանմունքների, առանձին լաբորատորիաների, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական հաստատությունների սպասարկող ավագ և միջին բուժաշխատողների համար՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունից, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից), որոնք իրականացնում են քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների դեպքերի հայտնաբերում, վարում, բուժում, հաշվառում և հաշվետվության ներկայացում:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Սույն կանոնների և նորմերի 1-ին կետով ամրագրված կազմակերպություններն արձանագրած քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների դեպքերի մասին ընթացիկ կամ արտահերթ

համակարգով տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը /այսուհետ՝ Ազգային կենտրոն/:

3. Քիմիական թունավորումները և ճառագայթային ախտահարումները դասակարգվում են համաձայն Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 871-Ն հրամանի (Հիվանդությունների միջազգային դասակարգում՝ ՀՄԴ-10):

4. Քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ տեղեկատվությունն օգտագործվում է՝

1) համաճարակաբանական հսկողության համակարգի աշխատանքն ապահովելու,

2) հակահամաճարակային և կանխարգելիչ միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու,

3) բնակչության առողջության վերաբերյալ տեղեկատվության համակարգում առանձին քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների մասին տվյալների առկայությունն ապահովելու,

4) գործնականում քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների հսկողության և կանխարգելման նպատակային ծրագրերի մշակման ու գործադրման համար:

III. ԱՌԱՆՁԻՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

5. Առանձին քիմիական թունավորման կամ ճառագայթային ախտահարման դեպքեր հայտնաբերած ավագ և միջին բուժաշխատողները դրանց մասին (հաստատված և/կամ կասկածելի դեպքերի) շտապ հաղորդում են Ազգային կենտրոնի մասնաճյուղեր՝ (այսուհետ՝ Ազգային կենտրոն) անմիջապես էլեկտրոնային ձևաչափով կամ հեռախոսով կամ ֆաքսով, այնուհետև 24 ժամվա ընթացքում ուղարկում են շտապ հաղորդման քարտ՝ համաձայն հավելված 3-ի ձև 1ա-ի և ձև 1բ-ի:

6. Բոլոր բուժաշխատողների կողմից պահպանվում է քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների դեպքերին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում Ազգային կենտրոնի բոլոր մասնաճյուղերում սույն կանոնների և նորմերի 1-ին կետով ամրագրված բոլոր կազմակերպություններում անհատապես հաշվառման ենթակա են հավելված 2-ում ներկայացված ճառագայթային ախտահարումները, ինչպես նաև քիմիական թունավորումներն՝ անկախ թունավորման վայրից, հիվանդի քաղաքացիությունից:

8. Նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունները սպասարկող բուժաշխատողը Ազգային կենտրոնի մասնաճյուղ շտապ հաղորդման քարտ ուղարկում է այն դեպքերում, երբ քիմիական թունավորման կամ ճառագայթային ախտահարման դեպքը հայտնաբերվում (կասկածվում) է առաջին անգամ՝ ուսումնական հաստատությունների սաների զննման ժամանակ:

9. Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կազմակերպությունների բուժանձնակազմը քիմիական թունավորում կամ ճառագայթային ախտահարում հայտնաբերելու դեպքում հայտնաբերման և հոսպիտալացման անհրաժեշտության և չհոսպիտալացման մասին հայտնում է Ազգային կենտրոնի մասնաճյուղեր, ինչպես նաև չհոսպիտալացված դեպքերում՝ նաև հիվանդի բնակության վայրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն՝ անհրաժեշտության դեպքում տանը հիվանդի բուժումը կազմակերպելու համար: Տվյալ դեպքերում շտապ հաղորդման քարտ կազմում է այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության բուժանձնակազմը, որտեղ հոսպիտալացվել է հիվանդը և ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության տնային կանչ կատարող բժիշկը:

10. Ախտորոշումը հաստատելու կամ փոխելու մասին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը կազմում է նոր շտապ հաղորդման քարտ և նշված ընթացակարգով ուղարկում հիվանդի հայտնաբերման տարածքի Ազգային կենտրոնի մասնաճյուղ՝ նշելով ախտորոշման հաստատման (ճշտման) մասին, դրա ամսաթիվը, նախնական ախտորոշումը և լաբորատոր հետազոտությունների արդյունքները:

11. Քիմիական թունավորման և ճառագայթային ախտահարումների դեպքերն անհատապես հաշվառվում են «Քիմիական թունավորումների (կամ ճառագայթային ախտահարումներ) հաշվառման մատյան»-ում՝ համաձայն հավելված 4-ի ձև 2ա-ի և «Ճառագայթային ախտահարումներ հաշվառման մատյան»-ում՝ համաձայն հավելված 4-ի ձև 2բ-ի: Մատյանները վարվում են բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (բաժանմունքներում)՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից և գերատեսչական պատկանելիությունից (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունից, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից), նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում և առանձին լաբորատորիաներում:

12. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները Ազգային կենտրոնի (ըստ տեղակայման վայրի) մասնաճյուղեր են ներկայացնում ամսական տեղեկատվություն «Քիմիական թունավորումների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափ»-ով ձև 3ա և «Ճառագայթային ախտահարումների վերաբերյալ տեղեկատվության ձևաչափ»-ով ձև 3բ՝ համաձայն հավելված 5-ի:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014թվական դեկտեմբերի 27-ի թիվ 74 -Ն հրաման

Ց Ա Ն Կ

Քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղեր արտահերթ հաղորդման

(քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների կոդերը ներկայացված են համաձայն Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 871-Ն հրամանի (Հիվանդությունների միջազգային դասակարգում՝ ՀՄԴ-10)

1. **Քիմիական թունավորումներ**

1) **Ալկոհոլ** (S 51), այդ թվում էթիլ սպիրտ, էթանոլ (S 51.0), մեթանոլ մեթիլ սպիրտ (S 51.1), 2-պրոպանոլ, իզոպրոպիլ սպիրտ (S 51.2), այլ սպիրտներ (S 51.8),

2) **Չբացահայտված սպիրտ** (S 51.9), այդ թվում, դենատուրատ, օդեկոլոն և օծանելիք, ապակիների մաքրման միջոցներ, ալկոհոլի փոխարինողներ, տեխնիկական սպիրտ, արգելակային հեղուկ, տոսոլ, էթիլենգլյուկոլ և այլ,

3) **Թմրամիջոցներ և պսիխոդիսլեպտիկներ** (հալլուցինոգեններ), այդ թվում, օպիում (S 40.0), հերոին (S 40.1), այլ օպիոիդ նյութեր (կոդեին, մորֆին) (S 40.2), մեթադոն (S 40.3), այլ սինթետիկ թմրամիջոցներ (S 40.4), կոկաին (S 40.5), այլ չպարզաբանված թմրամիջոցներ (S 40.6), կոննաբիս (S 40.7), լիզերգիդ (S 40.8), այլ չպարզաբանված պսիխոդիսլեպտիկներ (հալլուցինոգեններ) (S 40.9),

4) **Դեղեր,** դրանցից՝ համակարգային ազդեցության հակաբիոտիկներ (S 36), համակարգային ազդեցության այլ հակամանրէային և

հակամակաբուծաբանական դեղամիջոցներ (S 36), հորմոններ և դրանց սինթետիկ փոխարինողներ և անտագոնիստներ, որոնք դասակարգված չեն այլ հոդվածներով (S 38), ոչ օպիոիդ ցավազրկող, ջերմիջեցնող և հակառևմատոիդ միջոցներ (S 39), հակացնցումային, սեդատիվ, քնաբեր և հակապարկինսոնիկ միջոցներ (S 42), բարբիտուրատներ (S 42.3), բենզոդիապեդիններ (S 42.4), հոգեմետ միջոցներ, որոնք դասակարգված չեն այլ հոդվածներով (S 43),տրիցիկլիկ և տետրացիկլիկ հակադեպրեսանտներ (S43.0), հակապսիխոտիկ և նեյրոլեպտիկ միջոցներ (S43.3), գերազանցապես վեգետատիվ նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ (S 44), գերազանցապես համակարգային ազդեցության և արյունաբանական գործոններ, որոնք դասակարգված չեն այլ հոդվածներով (S45), գերազանցապես սրտանոթային համակարգի վրա ազդող միջոցներ (S 46), միզամուղներ և անհայտ այլ դեղամիջոցներ և կենսաբանական նյութեր (S50), այլ (S41, S47, S48, S49);

5) **Օրգանական լուծիչներ** (S 52), հալոգենացված ալիֆատիկ և արոմատիկ ածխաջրատներ (S 53), քայքայիչ նյութեր (S 54), քացախաթթու և քացախային էսենցիա (S 54.2), մետաղներ (S 56), այլ գազեր, ծուխ և գոլորշիներ (S 59), թունաքիմիկատներ (S 60),
6) **Նյութեր,** որոնք պարունակվում են սննդի մեջ օգտագործված ծովամթերքներում (S 61),
7) **Այլ թունավոր նյութեր**, որոնք պարունակվում են սննդի մեջ օգտագործված մթերքում (S 62) և սնկերում (S 62.1),
8) **Թունավոր նյութեր,** որոնք պարունակվում են սննդում օգտագործված բույսերում (S 62.2), սննդում օգտագործված մթերքում պարունակվող աֆլոտոքսինն ու այլ միկոտոքսինները (S 62.2),
9) **Թունավոր կենդանու** հետ շփման հետևանքով առաջացած թունավորում (S 63),
10) **Այլ և չպարզաբանված** նյութերի թունավոր ազդեցության արդյունքում (S 65),
11) Այլ (S 55).

2. Ճառագայթային ախտահարման ազդեցության հետևանքներ՝

1) Ճառագայթային հիվանդություն (T66)
2) Այրվածքներ (T20-31)
3) Լեյկեմիա (C91-C95)
4) Ճառագայթային՝

   ա. Գաստրոէնտերիտ և կոլիտ (K52.0)

   բ. Պնևմոնիտ (J70.0)

   գ. Մաշկային և ենթամաշկային հյուսվածքի փոփոխություններ (L55-L59)
5) Ճառագայթային այրվածք (L55)

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014թվական դեկտեմբերի 27-ի թիվ 74 -Ն հրաման

Ձև 1ա

ՔԱՐՏ

ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ ՇՏԱՊ ՀԱՂՈՐԴՄԱՆ

1. Հիվանդի անուն, ազգանուն, հայրանուն՝

_____

2. Սեռ՝ ___ Տարիք՝ ___

3. Սոցիալական վիճակ՝ ☐ աշխատող ☐ սովորող

☐ թոշակառու ☐ գործարար

☐ չաշխատող (աշխատունակության տարիքի)

4. Պատահարի վայր՝ / մարզ/շրջան /_____ քաղաք/գյուղ _____

փողոց _____ տուն /բնակարան __

5. Դեպքի վայրը՝ ☐ բնակարան ☐ հասարակական վայր

☐ արտադրամաս ☐ ԲՕևՍԿ ☐ տրանսպորտ

☐ փողոց ☐ այլ ☐անհայտ

6. Դեպքի վայրի անվանումը՝ _____

7. Ամսաթվերը՝ ☐ թունավորման _____

☐ առաջին անգամ դիմելու _____

☐ ախտորոշման հաստատման _____

8. Ախտորոշումը՝

_____

Թույնի անունը + կոդը ըստ ՀՄԴ-10-ի

9. Ախտորոշման ամսաթիվ՝----------

10. Բժշկական օգնությունը և սպասարկումը ցուցաբերվել է՝

☐ շտապ օգնության բրիգադի կողմից,

☐ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից,

☐ հիվանդանոցային բժշկական կազմակերպության կողմից առանց հետագա հոսպիտալացման,

☐ հիվանդանոցային բժշկական կազմակերպության կողմից՝ հիվանդի հոսպիտալացման դեպքում:

11. Մահացել է՝

☐ ԲՕևՍԻԿ-ից դուրս _____

(նշել՝ որտեղ)

☐ ԲՕևՍԿ-ում՝ ընդունվելու պահից _____ ժամ հետո

12. Թունավորման հանգամանքները՝

1) բնույթը՝ ☐ անհատական

☐ ընտանեկան

☐ զանգվածային (թունավորվածների թիվը՝ ---------)

☐ խմբային

2) կանխամտածված՝ ☐ ինքնասպանություն ☐ քրեական

☐ թմրամիջոց ☐ մթագնման նպատակով

☐ վիժման նպատակով

3) պատահական՝ ☐ արբեցման նպատակով ☐ սխալ ընդունում

☐ ինքնաբուժում ☐ արտադրական

☐ տեխնածին վթար

☐ թունավոր կենդանիների հետ շփում

☐ թունավոր բույսերի հետ շփում

☐ բժշկական սխալ

☐ կողմնակի ազդեցություններ

☐ սննդային ոչ մանրէաբանական բնույթի

☐ այլ _____ ☐ անհայտ

13. Թույնի գնման վայրը՝ ☐ դեղատուն, դեղատնային կրպակ

☐ խանութ

☐ կազմակերպություն

☐ այլ _____

☐ անհայտ

Լրացման ամսաթիվը

"___"_____ 20... թ.

Շտապ հաղորման քարտը լրացնող

բուժ. աշխատողի ստորագրությունը

_____ (_____)

Ազգանունը՝ ընթեռնելի

Ձև 1բ

ՔԱՐՏ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ ՇՏԱՊ ՀԱՂՈՐԴՄԱՆ

1. Հիվանդի անուն, ազգանուն, հայրանուն՝

_____

2. Սեռ՝ ___ Տարիք՝ ___

3. Սոցիալական վիճակ՝ ☐ աշխատող ☐ սովորող

☐ թոշակառու ☐ գործարար

☐ չաշխատող (աշխատունակության տարիքի)

4. Պատահարի հասցեն՝ / մարզ/շրջան /_____ քաղաք/գյուղ _____

փողոց _____ տուն /բնակարան __

5. Դեպքի վայրը՝ ☐ բնակարան ☐ հասարակական վայր

☐ արտադրամաս ☐ ԲՕևՍԿ ☐ տրանսպորտ

☐ փողոց ☐ այլ ☐անհայտ

6. Դեպքի վայրի անվանումը՝ _____

7. Ամսաթվերը՝ ☐ ախտահարման _____

☐ առաջին անգամ դիմելու _____

☐ ախտորոշման հաստատման _____

8. Ախտորոշումը՝

_____

Ճառագայթային ախտահարման տեսակը

9. Ախտորոշման ամսաթիվ՝----------

10. Բժշկական օգնությունը ցուցաբերվել է՝

☐ շտապ օգնության բրիգադի կողմից,

☐ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության կողմից,

☐ ԲՕևՍԻԿ՝ առանց հետագա հոսպիտալացման,

☐ ԲՕևՍԻԿ-ում՝ հիվանդի հոսպիտալացման դեպքում:

11. Մահացել է՝

☐ ԲՕևՍԻԿ-ից դուրս _____

(նշել՝ որտեղ)

☐ ԲՕևՍԿ-ում՝ ընդունվելու պահից _____ ժամ հետո

12. Ճառագայթային ախտահարման հանգամանքները՝

12.1. բնույթը՝ ☐ անհատական

☐ ընտանեկան

☐ զանգվածային (ճառագայթային ախտահար. թիվը՝ ---------)

☐ խմբային

Լրացման ամսաթիվը

"___"_____ 20... թ.

Շտապ հաղորման քարտը լրացնող բուժ. աշխատողի ստորագրությունը

_____ (_____)

Ազգանունը՝ ընթեռնելի

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014թվական դեկտեմբերի 27-ի թիվ 74 -Ն հրաման

Ձև 2ա

ՄԱՏՅԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Սկիզբ ----- 20 թ. Վերջ ------ 20 թ.

Քիմիական թունավորման անվանում

N	Հեռախոսով հաղորդման (ընդունման) ամսաթիվը, ժամը և առաջնային շտապ հաղորդման քարտի համարը	Հաղորդում ուղարկող ԲՕԱՍԿ-ի անվանումը	Անուն, Ազգանուն, Հայրանուն	Տարիքը (մինչև 3տ երեխաների համար նշել ծնվելու ամսաթիվը և տարին)	Հասցեն՝ քաղաք, գյուղ, փողոց, տուն, բն.	Աշխատանքի վայրի, նախադպրոցական, դպրոցական կազմակերպության անվանումը (խումբ, դասարան), վերջին հաճախման ամսաթիվը	Առաջին անգամ դիմելու ամսաթիվը	Թունավորման ամսաթիվը	Սխալորոշման և դրա հաստատման ամսաթիվը	Հոսպիտալացման տեղն ու ամսաթիվը	Փոփոխված (ճշտված) ախտորոշումը և դրա հաստատման ամսաթիվը	Հանձնարարականներ հետազոտության ամսաթիվը, հետազոտող մասնագետը	Թունավորման մասին հաղորդում (հիվանդի մշտական բնակության նախադպրոցական, դպրոցական, աշխատանքի վայրի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղեր)	Լաբորատոր հետազոտությունների տարբերակը	Ծանոթություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Ձև 2բ

ՄԱՏՅԱՆ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՄԱՆ ԴԵՊՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Սկիզբ ----- 20 թ. Վերջ ------ 20 թ.

Ճառագայթային ախտահարման անվանումը ----------

N	Հեռախոսով հաղորդման (ընդունման) ամսաթիվը, ժամը և առաջնային շտաբ հաղորդման թարմի համարը	Հաղորդում ուղարկող ԲՕԱՍԿ-ի անվանումը	Անուն, Ազգանուն, Հայրանուն	Տարիքը (մինչև 3տ երեխաների համար նշել ՀՇՊ-ների ամսաթիվը և տարին)	Հացեր՝ բանաք, գարեք, գնչի ձմեռք, հորոց, տուն, բն.	Աշխատանքի վայրի ճառագայթային դոզիմետրիստ, դոզիմետրիստ կազմակերպության անվանումը (հասցե, գրասենյակ) ընդունող դոզիմետրիստ	Առաջին անգամ դիմելու ամսաթիվը	Ախտահարման աղբյուրը	Ախտորոշման և դրա հաստատման ամսաթիվը	Հոսպիտալացման տեղն ու ամսաթիվը	Փոփոխված (ճշտված) ախտորոշումը և դրա հաստատման ամսաթիվը	Համաճարակաբժշկական հետազոտության ամսաթիվը, հետազոտող ատյանները	Ախտահարման մասին հարցումով (հիվանդի մշտական բնակության դիսպանսերում, դիսպանսերիում, աշխատանքի վայրի ՀԿԿԱԿ-ի մասնաճյուղում)	Ճառագայթային ախտահարման տեսակը	Ծանոթություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014թվական դեկտեմբերի 27-ի թիվ 74 -Ն հրաման

Ձև 3ա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանում----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ----------

N	Քիմիական թունավորման տեսակը	Տող թիվ	Ամբողջ ազգաբնակչությունը (0-70 տարեկան և բարձր)		Մանկական ազգաբնակչություն (0-14 տարեկան)		Դեռահասներ (15-17 տարեկան)		Մեծահասակ ազգաբնակչություն (18-70 տարեկան)	
			Ընդա-մենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	

2	Սուր (կենցաղային, արդյունաբերական, տեխնածին) քիմիական թունավորումներ ընդամենը (04, 07, 10, 13, 16 տողերի գումարը)	(4/01)								
3	Նրանցից (01 տողից)՝ արական	02								
3.1	Իգական	03								
4.	Թունավորումներ (01 տողից)՝ սպիրտ պարունակող արտադրանքով ընդամենը	04								
4.1	նրանցից (04 տողից) արական	05								
4.2	Իգական	06								
5.	Թմրամիջոցներով ընդամենը	07								
5.1	Նրանցից (07 տողից) Արական	08								
5.2	Իգական	09								
6.	Դեղամիջոցներով ընդամենը	10								
6.1	Նրանցից (10 տողից) Արական	11								
6.2	Իգական	12								
7.	Սննդամթերքով ընդամենը	13								

7.1	Նրանցից (13 տողից) Արական	14								
7.2	Իգական	15								
8.	Այլ քիմիական թունավորումներ ընդամենը	16								
8.1	Նրանցից (16 տողից) Արական	17								
8.2	Իգական	18								

Ձև 3բ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանում----------

Ամիս, ամսաթիվ, տարեթիվ----------

N	Ճառագայթային ախտահարման տեսակը	Տող թիվ	Ամբողջ ազգաբնակչությունը (0-70 տարեկան և բարձր)		Մանկական ազգաբնակչություն (0-14 տարեկան)		Դեռահասներ (15-17 տարեկան)		Մեծահասակ ազգաբնակչություն (18-70 տարեկան)	
			Ընդա-մենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)	Ընդամենը (մարդ)	Նրանցից մահացու ելքով (մարդ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	
2	Ճառագայթային հիվանդություն	(4/01)								
3	Նրանցից (01 տողից)՝ արական	02								
3.1	իգական	03								
4.	Այրվածքներ՝ ընդամենը	04								
4.1	նրանցից (04 տողից) արական	05								
4.2	իգական	06								

5.	Լեյկեմիա՝ ընդամենը	07								
5.1	Նրանցից (07 տողից) արական	08								
5.2	իգական	09								
6.	Ճառագայթային գաստրոէնտերիտ և կոլիտ՝ ընդամենը	10								
6.1	Նրանցից (10 տողից) արական	11								
6.2	իգական	12								
7.	Ճառագայթային պնևմոնիտ՝ ընդամենը	13								
7.1	Նրանցից (13 տողից) արական	14								
7.2	իգական	15								
8.	Ճառագայթային մաշկային և ենթամաշկային հյուսվածքի փոփոխություններ՝ ընդամենը	16								
8.1	Նրանցից (16 տողից) արական	17								
8.2	իգական	18								

9	Ճառագայթային այրվածք՝ ընդամենը	19								
9.1	Նրանցից (19 տողից) արական	20								
9.2	իգական	21								